պատուեցեալք 'ի պատճառէ արդարութենէ որդոց իւրեանց, ոմն անաչառ դատաւորութենէ, ոմն անյաղթելի զօրաւորութենէ, ոմն 'ի յուշիմութենէ, հնարագիտութենէ և հաւատարիմ եղբարց և արանց իւրեանց, յայնժամ ծագեսցի փայլակն առաքինական և մաքրութեան, և անշէջ հրով այրեսցի ամենայն աղտ մոլութեան և չարութեան 'ի մէնջ ազգին և յերեսս երկրին Հայոց, և փայլեսցի յերկիր բնակչօք իւրօք 'ի գործօք առաքինութեան, և Օրհնեալ լինի ժամանակն այն։

Ցանկալի է ինձ յոյժ, զի զոր ինչ խորհուրդ և հնար, որ 'ի միտս իմ անցեալ եթէ կարի բանիւ բերանով իմով եղից 'ի յունկս բոլոր ազգին իմոյ, և զամենայն պատճառ ասացելոց իմոյ յատկապէս ճառեցից լեզուաւ իմով 'ի ունկս ձեր և տալով իրաւունս 'ի վերայ ամենայն հատոր իմոյս շարեալ կարգադրութեանց առ 'ի յառաջեցուցանել 'ի սիրտս ամենեցուն, այլ որպէս ոչ յինէն և ոչ ոք 'ի բնութենէ մարդոյ հնար կարելի, զի բերան միոյ առն կարի կարող լինիլ խօսել ընդ ունկս ազգ մի բոլոր, ուրեմն ես նախ խնդրելով ազատութիւն և արձակութիւն 'ի ձէնջ և ապա առաջացայ շարել բանն մտաց իմոց 'ի յայտ, հնարն թեթևացուցանելոյ ծանդրութիւն բեռանց ազգին իմոյ և հիմն հաստատութեան վասն կազմելոյ տուն և բնակութիւնս մեր, որ